Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ

2023 թվական

Միջոցառում	Կատարման ընթացիկ վիճակը
Միջոցառում 1.1 Հավաստագրված սերմերի, սածիլի և տնկանյութի արտադրության խթանում՝ գիտական կենտրոնների, գրանցված սերմարտադրողների և տնկարանների միջոցով	2023թ.-ին «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի լաբորատորիայում իրականացվել են շուրջ 11,9 հազար տոննա սերմերի լաբորատոր փորձարկումներ, 75%-ը կազմել են տեղական արտադրության սերմերը: 2023թ.-ին տրամադրվել են թվով 81 հավաստագրեր՝ տեղական արտադրության 1971,61 տոննա սերմերի համար, որից 1741,0 տոննան կազմել են ցորենը և գարին: 2023թ.-ին ՀՀ ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԲԲՏՄԳԿ) կողմից արտադրվել է շուրջ 250 կգ բանջարաբոստանային մշակաբույսերի տեղական սորտերի սերմեր և ԲԲՏՄԳԿ-ի կողմից արտադրվել է շուրջ 528 000 հատ թաղարային սածիլ:
Միջոցառում 1.2 Սերմարտադրող տնտեսությունների տեխնիկական հագեցվածության գնահատում, առաջարկությունների մշակում և համապատասխան տեխնիկական հագեցվածության ապահովում	ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն», «Երկրագործության գիտական կենտրոն» և «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ներում իրականացվել է առկա սարքերի, սարքավորումների, գյուղատնտեսական տեխնիկաների գույքագրում, ճշտվել է գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ ռեսուրսների ցանկը:
Միջոցառում 1.3 Տնկանյութի հավաստագրման ամբողջական համակարգի, այդ թվում հավաստագրման գործընթացների թվայնացման համակարգի ներդրում և կիրարկում	Տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրման նպատակով «Սերմերի և տնկանյութի» ՀՀ օրենքի հիման վրա ԷՆ կողմից մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել ենթաօրենսդրական իրավական ակտեր, ինչպես նաև սահմանվել են լիազոր մարմնին վերապահված մի շարք իրավական ակտեր: Սերմերի և տնկանյութի հավաստագրման համակարգի բարելավման նպատակով հիմնվել է կենսաքիմիական լաբորատորիայի բաղադրիչներից մեկը, տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրման նպատակով մշակվել են հրահանգ-ուղեցույցներ, հաստատվել է ՀՍՏ 434-2023 «Խաղողի տնկանյութ» ազգային ստանդարտը:

	Հավաստագրման գործընթացների թվայնացման գործընթացների անհրաժշտության հիմնավորումները ներկայացվել է ՄԱԿ-ի ՊԳԿ-ին և ընդհանուր առմամբ առկա է դրական դիրքորոշում դրանց իրագործելու վերաբերյալ:
Միջոցառում 1.4 Կերարտադրության խթանում, մասնավորապես՝ անասնակերի արտադրության, այդ թվում հիդրոպոնիկ եղանակով, ծավալների ավելացման նպատակով կերային մշակաբույսերի մշակության խրախուսում, արոտավայրերի և խոտհարքների գնահատում, բարելավման միջոցառումների մշակում	ՀՀ արոտների արդյունավետ օգտագործման նպատակով Ռազմավարական զարգացման գործակալության կողմից 2019-2022 թվականներին իրականացվել են հանրապետության արոտների իրավիճակի համալիր ուսումնասիրություններ, որի արդյունքում մշակվել է ՀՀ արոտների կայուն կառավարման հայեցակարգ»: Վերջինիս քննարկման արդյունքում նպատակահարմար է գտնվել այդ փաստաթղթում տեղ գտած վերլուծությունների, ինչպես նաև լրացուցիչ ուսումնասիրությունների հիման վրա մշակել ՀՀ-ում արոտների կայուն կառավարման ծրագիր, որը հետագայում կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը: Ծրագիրը, կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա, պետք է սահմանի առկա խնդիրները և առաջարկի դրանց լուծման ուղիները: Ծրագիրը կներառի արոտների ենթակառուցվածքների զարգացման հստակ միջոցառումներ և կսահմանի դրանց իրականացման իրատեսական ժամկետներ: Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքը, Ռազմավարական զարգացման գործակալության կողմից ստեղծվել է ՀՀ բնական կերահանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակ, ինչպես նաև ձևավորել հարթակի խորհրդատվական մարմին, որի անդամներ են հանդիսանում ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության, Ռազմավարական զարգացման գործակալության և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ներկայացուցիչներ: ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում փորձարկվել են ուկրաինական «Ագրո Արենա» ընկերության կողմից բուծված եգիպտացորենի թվով 9 հիբրիդներ: Բերքահավաքից հետո փորձարկման տվյալների ամփոփման փուլում են և դրանցից մի քանիսը կներկայացվեն գրանցման ՀՀ-ում օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի և հիբրիդների ցանկում: ՀՀ ԷՆ հետ համատեղ մշակված տեխնիկական առաջադրանքի հիման վրա Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը ԷԿՈսերվ ծրագրի շրջանակներում իրականացվել են արոտավայրերի բարելավման և արդյունավետ օգտագործման պետություն-մասնավոր գործընկերության մեխանիզմների մշակման իրագործելիության գնահատման աշխատանքներ Լոռու մարզի Մարգահովիտ և Վայոց ձորի Կարմրաշեն բնակավայրերում: Ասիական զարգացման բանկի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել արոտավայրերի երկարաժամկետ կառավարման և որպես արոտավայր պահպանելու նպատակով

	ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ, որի նպատակով մշակվել է տեխնիկական առաջադրանք: Հիդրոպոնիկ եղանակով անասնակերերի արտադրությունը խթանելու նպատակով Կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրում կատարվել են համապատասխան փոփոխություններ, ըստ որի ծրագրի շրջանակում հիդրոպոնիկ եղանակով կանաչ կերի արտադրության նպատակով ձեռք բերվող սարքավորումների համար անհրաժեշտ 20 տոկոս կանխավճարի 80 տոկոսը, բայց ոչ ավելի քան 4.0 մլն դրամը սուբսիդավորվում է:
Միջոցառում 1.5 Ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման խթանում և տարածում	Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի շրջանակում 2023թ.-ին հաստատվել է շուրջ 3000 հա (ներառյալ այգեհիմնումը) ոռոգման արդիական տեխնոլոգիաների ներդրման հայտ: «Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական» ծրագրի շրջանակում Բերքաբեր և Խաշթառակ բնակավայրերում կնքվել է 91 պայմանագիր՝ 6.985 հա-ի համար (Բերքաբեր՝ 45 պայմանագիր, 4.504 հա, Խաշթառակ՝ 46 պայմանագիր, 2.441 հա): Ընտրվել է նախագծման կազմակերպություն և ներկայումս իրականացվում է նախագծման գործընթացը՝ յուրաքանչյուր տնտեսավարողի համար: ՀՀ կառավարության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2020 թվականի ապրիլի 23-ին ստորագրված թիվ CAM 1002 06 D ֆինանսավորման դրամաշնորհային համաձայնագրի հիմքով իրականացվում է 10.000.000 եվրո դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում առնվազն 2000 հա ոռոգվող պիլոտային տարածքների արդիականացում: Պարենի համաշխարհային կազմակերպության (WFP) ոռոգման 2022-2024թթ. ծրագրի շրջանակում Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի մի շարք բնակավայրերում կառուցվել/վերանորոգվել է 33300 մ ջրագիծ՝ 1190 հա ոռոգելու համար, և 42900 մ ջրագիծ կանցկացվի՝ 1292 հա տարածքի ոռոգման նպատակով:
Միջոցառում 1.6 Խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծում, գործարկում, ազգային գեոպորտալում արտացոլելու նպատակով թեմատիկ շերտերի ստանդարտացման ուղեցույցի մշակում, ինտեգրում Կադաստրի	Խաղողի տնկարկների տեղեկատվությունը Ազգային գեոպորտալի հետ ինտեգրելու նպատակով Հիմնադրամի և ԷՆ համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների կողմից մշակվել և ՀՀ կադաստրի կոմիտեին է տրամադրվել «Խաղողի տնկարկ» թեմատիկ շերտի ստանդարտը՝ համապատասխանեցնելով այն ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «ՀՀ-ում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման դրույթներին:

կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալին	ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության (FAO) «Digital Technologies in support of Agriculture Value Chains and Rural Development» ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել «Խաղողի տնկարկների ռեեստր» միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներին: Ներկայումս վերջանականացվել և ամբողջականացվել են համակարգի ստեղծման համապարփակ տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները: 2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին GIZ PSD TVET ծրագրի աջակցությամբ՝ միջազգային փորձագետի կողմից մշակվել է «Խաղողի տնկարկների ռեեստր» միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի գործարկման ճանապարհային քարտեզը: Վերջինս ներառում է համակարգի աշխատանքային հոսքերի, կանոնների և ընթացակարգերի սահմանումները՝ համակարգում ճշգրիտ և արդիական տեղեկատվություն պահպանելու, խաղողի հումքով ալկոհոլային խմիչքների հետագծելիությունն ապահովելու համար: Ինչպես նաև GIZ PSD TVET ծրագրի աջակցությամբ՝ միջազգային փորձագետի այցի շրջանակներում Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ներկայացուցիչների կողմից հանդիպումներ են կազմակերպվել Արարատի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և խաղողագործների հետ: Հանդիպումների նպատակն էր շահագրգիռ կողմերին ներկայացնել «Խաղողի տնկարկների ռեեստր» միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման գործընթացը, համակարգի հիմնական նպատակները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների և խաղողագործների հիմնական դերը վերը նշված համակարգի ստեղծման գործընթացում: Բացի այդ, 2020 թվականի հուլիսից մեկնարկել է «Խաղողի այգիների ռեեստրի ստեղծում» ծրագիրը, որին պետք է հաջորդի խաղողի արժեշղթայի միասնական տեղեկատվական հարթակի ստեղծման աշխատանքներին: Խաղողի այգիների ռեեստրի ստեղծում ծրագրի շրջանակներում գույքագրվել են խաղողի ամբողջ տարածքները, որոնց շուրջ 80%-ը նույնականացվել են: Շարունակվում են նույնականացման աշխատանքները, որին զուգահեռ աշխատանքներ են տարվում հարթակի ստեղծման ուղղությամբ: FAO-ի կողմից ներկայացվել է տեխնիկական առաջադրանքը, որին կհաջորդի մրցույթը: Հարթակի գործարկմանը զուգընթաց «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ, որով կսահմանվեն. • խաղողագործների կողմից մշակվող հողատարածքների և ակնկալվող բերքի հայտարարագրման պարտադիր պահանջ, • մթերողներն իրավունք կունենան մթերելու միայն հայտարարագիր ներկայացրած խաղողագործների բերքը,

	• համակարգին պետք է միանան խաղողի արժեշղթայի բոլոր շահառուները, խաղողի վաճառքն ու մթերումը պետք է թույլատրվի միայն համակարգում գրանցված խաղողագործներին և մթերողներին:
Միջոցառում 1.7 Հումքի մթերման գործընթացին աջակցություն	Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2023 թվականին հաստատվել է 124 շահառուի 221 հայտ շուրջ 15.5 մլրդ դրամ ծավալով, որոնց շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել են 9068 հատ բերքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 3.8 մլրդ դրամ: Ծրագրի մեկնարկից մինչև 2023թ. ավարտը հաստատվել է 584 շահառուի 1121 հայտ շուրջ 105.1 մլրդ դրամ ծավալով, գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել է 67529 հատ բերքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է շուրջ 11.4 մլրդ դրամ: 2023 թվականին մթերվել է շուրջ 86.3 հազար տոննա պտուղբանջարեղեն և շուրջ 160.0 հազար տոննա խաղող: Կառավարության կողմից 2023 թվականի սեպտեմբերի 7-ին ընդունվել են «2023 թվականի խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումները հաստատելու մասին» N 1520-Լ, «2023 թվականի խաղողի ավելցուկային բերքի մթերման գործընթացը կազմակերպելու նպատակով «Հայ-ալմաստ» փակ բաժնետիրական ընկերությանը բյուջետային վարկ տրամադրելու և գնման գործընթացի առանձնահատկությունները սահմանելու մասին» N 1523-Լ և «2023 թվականին խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարողներին գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի շրջանակներում բյուջետային երաշխիքների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1530-Լ որոշումները, որոնց հիմնական նպատակն է 2023 թվականին արտադրված խաղողի բերքի մթերման գործընթացը կազմակերպելու համար խաղողի վերամշակմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին աջակցելը, մասնավորապես՝ պատրաստի արտադրանքի ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերի մեղմելը և խաղողի մթերումների համար անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելը: Միջոցառումների իրականացման արդյունքում խաղողի մթերումներն իրականացվել են առանց խոչընդոտների:
Միջոցառում 1.8 Ագրոպարենային ոլորտի ընկերությունների արտադրական	ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում 2023թ.-ին հաստատվել է 119 շահառուի 142 լիզինգի հայտ շուրջ 6.2 մլրդ դրամի ծավալով, ձեռք է բերվել 495 միավոր սարքավորում, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 3.5 մլրդ դրամ:

կարողությունների հզորացում և արդիականացում	Ծրագրի մեկնարկից մինչև 2023թ. ավարտը հաստատվել է 734 շահառուի 1052 լիզինգի հայտ շուրջ 42.2 մլրդ դրամ ծավալով, ձեռք է բերվել 2731 միավոր սարքավորում, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 7.6 մլրդ դրամ:
Միջոցառում 1.9 Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի իրականացում	Ինտենսիվ այգեգործության զարգացման, ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման ծրագրի շրջանակում 2023թ.-ին հաստատվել է շուրջ 2350 հա այգեհիմնման հայտ: «Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական» ծրագրի շրջանակում Տավուշի մարզի Բերքաբեր և Խաշթառակ բնակավայրերում կնքվել է 91 պայմանագիր՝ 6.985 հա-ի համար (Բերքաբեր՝ 45 պայմանագիր, 4.504 հա, Խաշթառակ՝ 46 պայմանագիր, 2.441 հա):
Միջոցառում 1.10 Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի թարմացման միջոցառման իրականացում	ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումը գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողներին: Ծրագրի շրջանակում 2023թ.-ին ձեռք է բերվել 719 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում 213 միավոր տրակտոր և 5 միավոր կոմբայն: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 3.1 մլրդ դրամ:
Միջոցառում 1.11 Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրում	Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025թթ. ծրագրի շրջանակում կնքվել է 1 պայմանագիր՝ 10-30 հա մակերեսով հողատարածքների միավորման համար: ՀՀ կառավարության 2022թ. հոկտեմբերի 13-ի N 1605-Լ որոշմամբ հաստատված հողային բարեփոխումների փորձնական ծրագիրն իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը: ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան և Խոյ համայնքի Հայթաղ բնակավայրերում իրականացվել է վարելահողերի և բազմամյա տնկարկների իրավական խնդիրների ամբողջական գույքագրում: Հայթաղ բնակավայրում ձեռք է բերվել 11.4 հա ընդհանուր մակերեսով 39 հողակտոր: Ծրագրի շրջանակում աջակցություն է ցուցաբերվել իրավական խնդիրների կարգավորման նպատակով:
Միջոցառում 1.12 Վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղօրոք նախազգուշացման համակարգի հիմնում	2023թ. դեկտեմբերին հանրային ներդրումային կոմիտեի հինգերորդ նիստում ընդունված որոշմամբ հաստատվել է «Վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղօրոք նախազգուշացման համակարգի հիմնում» ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը և հանձնարարվել է այն ներառել հանրային ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների ցանկում՝ ապահովելով ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների ստացման գործընթացը՝ համաձայն Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Հանրային ներդրումային

	ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» N 175-Ն որոշմամբ սահմանված կարգի 43-րդ կետի 2-րդ ենթակետի: Հիմք ընդունելով վերոգրյալը, ՀՀ 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾԾ) գծով շրջակա միջավայրի նախարարության ծրագրային ֆինանսավորման (Նոր նախաձեռնություններ) ամփոփ հայտը ձևավորելու նպատակով, ծրագիրը, որպես նոր նախաձեռնություն, ներառվել է «Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ 2025-2027թթ. ՄԺԾԾ հայտում:
Միջոցառում 1.13 Գյուղատնտեսության ապահովագրության փորձնական ծրագրի իրականացում, մոնիթորինգ և գնահատում	ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակում 2023 թվականին ապահովագրվել են ծիրան, խաղող, դեղձ, սալոր, խնձոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ, աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ մշակաբույսերը: Ապահովագրվող ռիսկերն են՝ գարնանային ցրտահարությունը, երաշտը, կարկուտը և հրդեհը: 2023թ.-ի գյուղատնտեսական տարվա համար ԳԱԱԳ-ի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 10192 ապահովագրական պայմանագիր, համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 1.8 մլրդ դրամ: Կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է 11662 հա: 2023թ.-ին տրվել է 3864 հատ ապահովագրական հատուցում՝ շուրջ 2.7 մլրդ դրամ ծավալով:
Միջոցառում 1.14 Գյուղատնտեսության ապահովագրության նոր պրոդուկտների մշակում, մասնավորապես՝ գյուղատնտեսական մշակաբույսերի, գյուղատնտեսական կենդանիների և գյուղատնտեսական գույքի	Միջոցառման սկիզբ նախատեսված է 2024 թվականը:
Միջոցառում 1.15 Փոփոխվող բնակլիմայական պայմաններում ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի	ԲԲՏՄԳԿ-ում տարվում են սելեկցիոն աշխատանքներ փոփոխվող բնակլիմայական պայմաններում ադապտացված նոր սորտերի ստեղծման ուղղությամբ: Ասիական զարգացման բանկի հետ համատեղ իրականացվել է բարձրարժեք մշակաբույսերի դիվերսիֆիկացիայի բարձրացմանն ուղղված գյուղատնտեսության ոլորտի արտադրական

արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում	համակարգի բարելավման արտադրողականության և մրցունակության բարձրացմանն ուղղված գնահատում և գյուղատնտեսության ոլորտի առկա կարիքների ուսումնասիրություն: Ասիական զարգացման բանկի հետ համատեղ ներկայումս մշակվում է Ճապոնիայի կառավարության կողմից ֆինանսավորվող կլիմայական պայմաններին հարմարվողական պարենային անվտանգության բարձրացմանն ուղղված դրամաշնորհային ծրագիր, որը նպատակ ունի ՀՀ Տավուշի և Շիրակի մարզերում բարելավել եկամուտ ստեղծող գործունեությունը և խիստ խոցելի համայնքների հարմարվողական կարողությունները, ինչպես նաև բարձրացնել ինստիտուցիոնալ կարողությունները կլիմայի վրա հիմնված գյուղատնտեսական ներդրումների ընդլայնման համար:
Միջոցառում 1.16 Աջակցություն ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության զարգացմանը	ԲԲՏՄԳԿ-ում փորձարկվել են նոր, տեղական արտադրության օրգանական պարարտանյութեր և արդյունքների հիման վրա առաջարկվել արտադրության մեջ ներդրման: 2023թ.-ին ընդունվել է «Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը և մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտեր: ՄԱԶԾ-ի հետ համագործակցության շրջանակում 2023թ.-ին ՀՀ Տավուշի և Լոռվա մարզերում իրականացվել է էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքի արտադրություն ջերմատնային տնտեսությունում, և կազմակերպվել է էկոլոգիապես մաքուր կերի արտադրություն, տրամադրվել է խորհրդատվական աջակցություն, ինչպես նաև օրգանական մեղվաբուծության զարգացմանն աջակցություն: ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնության ծրագրի շրջանակում իրականացվել է կանաչ և օրգանական գյուղատնտեսության արժեշթղայի աջակցություն՝ 131 ֆերմեր ստացել է ռեսուրսների խնայողություն և հմտություններ՝ աճեցնելու ավելի կանաչ և ավելի արդյունավետ մեթոդներով, 79 ֆերմեր ստացել է տեխնիկական աջակցություն և հմտություններ՝ օրգանական հավաստագրված արտադրանք վաճառելու և կենսաբազմազանության պահպանմանը նպաստելու համար: Ընդհանուր առմամբ, ԱԶԳ-ի և ՄԱԶԾ-ի ծրագրերի շրջանակում 527 ֆերմեր ստացել են նորարարական տեխնոլոգիաներ և սարքավորումներ իրենց կանաչ և օրգանական գյուղատնտեսական գործունեության համար: GIZ կազմակերպության ԷԿՈսերվ ծրագրի Օրգանական ծագման պարարտանյութերի արտադրության և սպառման խթանումը ՀՀ-ում թեմայի շրջանակում իրականացվել է պարարտանյութերի արտադրության մի քանի սցենարների գնահատում, որոնք կիրառելի կլինեն ՀՀ-ում: Նպատակն էր ուսումնասիրել և վերհանել օրգանական թափոնների վերամշակման ամենակայուն, արդյունավետ և տնտեսապես իրագործելի մոտեցումը:

Միջոցառում 1.17 Խառը ցանքերի կիրառման խթանում ՀՀ բոլոր մարզերում	GIZ կազմակերպության ԷԿՈսերվ ծրագրի շրջանակում 2023-2024թթ. Սյունիքի և Վայոց ձորի մարզերի մի շարք բնակավայրերում իրականացվելու է 542 հա խառը ցանքեր՝ 5 տարի և ավելի չմշակված վարելահողերում:
Միջոցառում 1.18 Աջակցություն ջերմատնային տնտեսությունների հիմնմանը	«Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման աջակցության» ծրագրի շրջանակում 2023 թվականի ընթացքում կնքվել է 12 պայմանագիր՝ 2.2 հա մակերեսով ջերմատնային տնտեսությունների հիմնման նպատակով, շահագործման է հանձնվել 13 ջերմատուն՝ 2.3 հա ընդհանուր մակերեսով, որոնց համար տրամադրվել է 327.1 մլն ՀՀ դրամ փոխհատուցում: «ՀՀ-ում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության» նոր ծրագրի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության և թվով 4 ֆինասական կառույցի միջև կնքվել է պայմանագիր: Հաստատվել է 1 վարկային պայմանագիր 5.2 հա ընդհանուր մակերեսով ջերմատնային տնտեսության հիմնման համար: Սուբսիդավորում դեռևս չի իրականացվել: ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի մեկնարկից մինչև 2023թ. ավարտը հաստատվել է շուրջ 23.5 հա ջերմատնային տնտեսությունների հիմնման հայտ, իսկ 2023 թվականին՝ 5.75 հա-ի հայտ:
Միջոցառում 1.19 Տոհմային անասնաբուծության, թռչնաբուծության և ձկնաբուծության զարգացում՝ տոհմային կենդանիների ձեռք բերման աջակցության ծրագրի իրականացում, տոհմային կենդանիների կադաստրի վարում: Գյուղատնտեսական կենդանիների պահվածքի արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանն աջակցություն	Տոհմային անասնաբուծության, թռչնաբուծության և ձկնաբուծության խթանման նպատակով 2023թ.-ին պետական աջակցություն է ցուցաբերվել 3 թռչնաբուծարանների և շուրջ 12 տավարաբուծական տնտեսությունների, ինչպես նաև 1 խոշոր տավարաբուծական համալիրի, ինչը հնարավորություն է ընձեռել արտադրական ողջ գործընթացն իրականացնել ժամանակակից տեխնոլոգիաներով: Տոհմային կենդանիների ձեռք բերման նպատակով պետական աջակցության ծրագրերից՝ մեկնարկից մինչ 2023թ. ավարտն օգտվել են տավարաբուծությամբ զբաղվող 36 շահառու և ոչխարաբուծությամբ զբաղվող շուրջ 15 շահառու: Ձկնաբուծության ոլորտում նախատեսվում է ձկան արտադրության ծավալների 3-4 % աճ, ինչի շնորհիվ ձկան արտադրության տարեկան ծավալը կկազմի գրեթե 26 հազար տոննա: Միաժամանակ քայլեր են ձեռնարկվել նաև հանրապետությունում թառափի խիստ արժեքավոր տեսակի՝ բելուգայի բազմացումը մեր երկրում կազմակերպելու ուղղությամբ: Տոհմային կենդանիների կադաստրի վարման նպատակով վարվում է համապատասխան գրանցամատյան, որում արդեն ներառվել է շուրջ 2000 գլուխ տոհմային կենդանիների անհատական ցուցանիշները:
Միջոցառում 1.20 Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցմանը կամ վերակառուցմանը և դրանց	Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի ծրագրի շրջանակներում 2023թ.-ին կնքվել է 4 պայմանագիր, շահագործման է հանձնվել 2 անասնաշենք, որոնց տրամադրվել է 35 մլն ՀՀ դրամ ծավալով փոխհատուցում, ևս 4 շահառուի տրամադրվել է 34.3 մլն ՀՀ դրամ ծավալով փոխհատուցում՝ ծրագրով նախատեսված առաջին փուլի աշխատանքները ավարտելու համար:

տեխնոլոգիական ապահովմանն աջակցություն	
Միջոցառում 1.21 Ռեսուրսախնայող գյուղատնտեսության խթանում և զարգացում	Պարենի համաշխարհային ծրագրի (WFP) Կանաչ Էներգիա, արդյունավետ գյուղատնտեսության համար ծրագրի շրջանակում 2023թ.-ին 349654 ԱՄՆ դոլարի աջակցություն է ցուցաբերվել Շիրակի և Գեղարքունիքի մարզերում վերականգնվող էներգիայի և կայուն գյուղատնտեսական պրակտիկայի ներդրման համար: Սյունիքի մարզում 391487 ԱՄՆ դոլարի աջակցություն է ցուցաբերվել Փոքր ֆերմերներին ժամանակակից այգեգործության զարգացման համար ծրագրով՝ խելացի գյուատնտեսական տեխնոլոգիաներ ֆերմերներին տրամադրելու նպատակով:
Միջոցառում 1.22 Գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորման նոր մեխանիզմների մշակում և ներդրում	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ իրականացվել է Եվրամիության միասնական ագրարային քաղաքականության վարման փորձի ուսումնասիրություն և ներկայացվել է Էկոնոմիկայի նախարարություն՝ քննարկման:
Միջոցառում 2.1 Սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) սննդի անվտանգության համակարգի կամ ISO 22000 ստանդարտի ներդնման աջակցության ծրագրի մշակում	Ուսումնասիրվել է սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի (HACCP) և ISO 22000 ստանդարտի ներդրման գործառույթների հետ կապված առկա խնդիրները, առանձնահատկություններն ու մեխանիզմները, ինչպես նաև միջազգային փորձը՝ սննդամթերքի անվտանգության ապահովման վերոնշյալ համակարգերի ներդրման աջակցության ծրագիր մշակելու նպատակով: Ծրագրի նախագիծը ներկայումս գտնվում է մշակման փուլում:
Միջոցառում 2.2 Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակում	Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի N 1448-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը սահմանված կարգով ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:
Միջոցառում 2.3 Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների	««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով սահմանվել է դրույթ, որով ՀՀ կառավարությանը վերապահվում է ռիսկի գնահատման գիտական կենտրոնի լիազորման, լիազորությունների կասեցման և դադարեցման կարգի սահմանումը:

ռիսկերի գնահատման գիտական կենտրոնների նշանակում	Նախագծի ընդունման դեպքում կամրագրվի ռիսկի գնահատման գիտական կենտրոնի լիազորման, լիազորման կասեցման կամ դադարեցման կարգի սահմանման իրավական հիմքը: Մշակվել է «Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռիսկի գնահատումն իրականացնող գիտական կազմակերպության (կենտրոնի) լիազորման կարգը» սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:
Միջոցառում 2.4 Կենդանիների նույնականացման համակարգի ներդրում և բարելավում	ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում ծրագրի շրջանակներում միջոցառման իրականացման համար նախատեսված ապրանքների՝ ականջապիտակների ձեռքբերման նպատակով կնքված 17.03.2023թ. N ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/3-1-63-23 պայմանագրի շրջանակներում մատակարարվել են ականջապիտակները: Ծրագրի երկրորդ բաղադրիչի մասով՝ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքվել է դրամաշնորհային պայմանագիր: Ծրագրի շրջանակներում անհրաժեշտ ականջապիտակները «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բաշխվել են համայնքներն սպասարկող անասնաբույժներին: 2023թ.-ին համարակալվել է 428 081 գլուխ խոշոր եղջրավոր կենդանի՝ ներառյալ ընթացիկ տարվա հորթերը:
Միջոցառում 2.5 «ՀՀ-ում բրուցելոզի վերահսկման և վերացմանն ուղղված միջոցառումների կանխարգելման» ծրագրի մշակում	Մշակվել է «ՀՀ-ում բրուցելոզի վերահսկման, վերացման և կանխարգելման» ծրագիրը, որն առաջիկայում նախատեսվում է շրջանառել: «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում հանրապետության բոլոր համայնքներում, 2023թ.-ին «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է շուրջ 867 236 խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության նկատմամբ արյունառում:
Միջոցառում 2.6 Անասնաբուժական դեղամիջոցների (հատկապես հակաբիոտիկների) շրջանառության վերահսկման մեխանիզմների ներդրում	«Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը գտնվում է լրամշակման փուլում: Փաթեթը սահմանված կարգով կշրջանառվի ««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Կերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բուսասանիտարիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Անասնաբուժության մասին» օրենքում

	փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունվելուց հետո:
Միջոցառում 2.7 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում	էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից բույսերի հիվանդությունների, վնասատուների, մորեխների և մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով, Հայաստանի Հանրապետության համայնքների 184940 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում իրականացվել են մշտադիտարկման աշխատանքներ: Մշտադիտարկման աշխատանքների արդյունքների հիման վրա, ՀՀ մարզերի առավել վարակված շուրջ 83000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մկնանման կրծողների, մորեխների, ծղրիդների, հունիսյան բզեզի և օկնոգինա թրթուրների դեմ պայքարի աշխատանքների իրականացման նպատակով անհատույց տրամադրվել են «Բրոմադիոլոն», «Բրոդիֆակում» ազդող նյութերով մկնասպան և «Ցիպերմետրին» ազդող նյութով միջատասպան թունանյութեր, մասնավորապես, 2600 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում օկնոգինա, հունիսյան բզեզ և ծղրիդ վնասատուների դեմ պայքարի միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է 855 լ միջատասպան թունանյութ, իսկ շուրջ 80000 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների իրականացման նպատակով՝ մոտ 6400 լ մկնասպան թունանյութ: Վերոնշյալ միջոցառումների մեջ ներառված է Արագածոտնի և Կոտայքի մարզերի առավել վարակված 1350 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա քիմիական պայքարի աշխատանքների իրականացումը ավիացիոն եղանակով՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 13-ի N 1182-Ն որոշման և 2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մկնանման կրծողների դեմ 31250 հա պայքարի աշխատանքները՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1899-Ն որոշման:
Միջոցառում 2.8 Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրում	Մշակվել և շրջանառվել է «Կարանտին և ոչ կարանտին հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու և դրա աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի նախագիծը: Մշակման փուլում է գտնվում «Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Միջոցառում 2.9 Կլիմայի փոփոխության պայմաններում հիվանդությունների և վնասատուների ներթափանցման և տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումներ	Ներկայումս տարածաշրջանում գյուղատնտեսական մշակաբույսերի համար վտանգավոր վնասատու համարվող մորեխների ներթափանցման և տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումների իրականացման շրջանակում մորեխների մոնիթորինգի և վերջիններիս դեմ պայքարի անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման օպտիմալ ժամկետների պլանավորման նպատակով՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության «Կովկասում և Կենտրոնական Ասիայում մորեխների ազգային և տարածաշրջանային կառավարման բարելավում» ծրագրի շրջանակներում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից պլանշետների միջոցով իրականացվում են քարտեզագրման աշխատանքներ՝ գրանցելով մոնիթորինգի արդյունքները ASDC համակարգչային ծրագրում: Հավաքագրված տվյալների վերլուծությունից հետո տվյալների բազայի միջոցով (CCALM) կատարվում է ստացված տվյալների ուսումնասիրում, վերլուծություն, սխալների ուղղում և վերջնական ստացված տվյալները https://ccalm.org/engine/ կայքէջում արտացոլվում են, որոնք հասանելի են Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետությունների համար: Միաժամանակ, միջոցառման շրջանակներում մշակվել է սույն հավելվածի 2.8 կետում ներկայացված հրամանի նախագիծը:
Միջոցառում 2.10 Լաբորատորիաների ցանցի ստեղծման մեխանիզմների մշակում և անհրաժեշտ մարդկային ու տեխնիկական ռեսուրսների հստակ հատկորոշում՝ • ներկա իրավիճակի, այդ թվում՝ մարդկային ու տեխնիկական ռեսուրսների • գնահատում, բացերի գնահատում, կարիքների վերլուծություն, • կարողությունների հզորացմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում	Մշակվել և շրջանառվել է «Լաբորատորիաների ցանցի ստեղծման մեխանիզմների մշակման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Միջոցառում 3.1 Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի հաստատում և իրականացում	2023 թվականի հունիսի 29-ի N 1083-Լ որոշմամբ հաստատվել է Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և 2023-2026թթ. գործողությունների ծրագիրը: Ռազմավարության 2023-2026թթ. գործողությունների ծրագիրը ներառում է պարենային անվտանգության 4 բաղադրիչների (հասանելիություն, մատչելիություն, որակ և անվտանգություն, կայունություն և հարմարվողականություն) մասով 50 միջոցառում: Ամփոփվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել առաջին հաշվետվությունը՝ 2023 թվականի համար:
Միջոցառում 4.1 Հետբերքահավաքային կարողությունների հզորացում (օրինակ՝ սառնարանային տնտեսություններ, պահեստներ, լոգիստիկ կենտրոններ և այլն)	ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի Ներդրումային խորհրդի կողմից, ՎԶԵԲ-ի և Միացյալ Թագավորության կառավարության աջակցությամբ մշակվում է գյուղմթերքի մթերման և բաշխման կենտրոնների ստեղծման ծրագիրը: Քննարկման արդյունքում որոշվել է, որ Հայաստանի ներդրումային խորհրդի կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կներկայացվի գյուղմթերքի մթերման և բաշխման կենտրոնների ձևավորմանը նպաստող ռազմավարական մոտեցումների փաթեթ, համապատասխան առաջարկներով, որից հետո կմշակվի գյուղմթերքի մթերման և բաշխման կենտրոնների ստեղծման գործողությունների պլանը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվում է տարբեր դոնոր կառույցների կողմից իրականացված կամ իրականացվող ծրագրերը, որոնք նպատակ են ունեցել ՀՀ մարզերում ձևավորել համապատասխան ենթակառուցվածքներ կամ առաջարկել են նմանատիպ կառույցների ստեղծում: Միաժամանակ ուսումնասիրվում է նաև միջազգային փորձը՝ օգտագործելով ինչպես գրասենյակային վերլուծության մեթոդը (ներառյալ համապատասխան գրականության հայտնաբերում և ուսումնասիրություն) այնպես էլ տարբեր կառույցների և փորձագետների հետ խորը հարցազրույցի մեթոդաբանությունը, ինչպես նաև այլ երկրների նմանատիպ կառույցների հետ զրույցները: Ուսումնասիրվել են լոգիստիկ կենտրոնների տարբեր մոդելներ, կառավարման մոտեցումները, լոգիստիկ կենտրոնների ձևավորմանն ուղղված տարբեր երկրների պետական քաղաքականությունը և իրականացրած քայլերը: Միաժամանակ Հայաստանում գյուղատնտեսական ապրանքների լոգիստիկ կենտրոնների ձևավորման ռազմավարական փաստաթղթի մշակման աշխատանքների իրականացման նպատակով մանրամասն ուսումնասիրվել է հասանելի վիճակագրությունը, հավաքագրվել և Հայաստանի ներդրումային խորհրդին է ներկայացվել ՀՀ մարզերի որոշ բնակավայրերից 2021-2022թթ. ընթացքում հավաքված հինգ հիմնական պտղի և բանջարեղենի ծավալների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը՝ լոգիստիկ կենտրոնների նախնական տեղակայման վայրերը գնահատելու, ինչպես նաև մատակարարվելիք համապատասխան թարմ գյուղատնտեսական արտադրանքի ծավալները հասկանալու նպատակով: Բացի այդ ներկայացվում է ՀՀ մարզպետարաններից 2023 թվականի ընթացքում միջազգային կառույցների աջակցությամբ կամ մասնավոր ներդրումներով ստեղծված, գործարկված, կառուցման

	փուլում գտնվող և առաջիկայում պլանավորված սառնարանային պահեստավորման ու փաթեթավորման ենթակառուցվածքների և լոգիստիկ կենտրոնների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը. 1) ՀՀ Արագածոտնի մարզ – Թալին համայնքում կառուցման փուլում են գտնվում «Վիար Արմենիա» ՍՊԸ-ի կողմից 9800 խորանարդ/մետր ծավալով և Գագիկ Վարդանյան ԱՁ-ի 200 խորանարդ/մետր ծավալով մրգի պահպանության սառնարանային պահեստները: 2) ՀՀ Արմավիրի մարզ - Վաղարշապատ համայնքում 2 տնտեսվարողների կողմից իրականացվում է սառնարանների կառուցում ընդհանուր 130 տոննա հզորությամբ և ևս 2 տնտեսվարողի կողմից սառնարանային տնտեսությունների կառուցումը գտնվում է նախապատրաստական փուլում: Բաղրամյան համայնքում կառուցման փուլում է 1 սառնարան՝ 1200 խորանարդ/մետր ծավալով, իսկ 13 սառնարանի կառուցումը՝ 9580 խորանարդ/մետր ընդհանուր ծավալով գտնվում է նախագծման փուլում: 3) ՀՀ Սյունիքի մարզ - Գորիս համայնքում առկա է գործարկված գյուղատնտեսական մթերքների վերամշակման և փաթեթավորման 1 արտադրամաս՝ կառուցված Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում, Մեղրի համայնքում առկա է՝ գործարկված 35 սառնարանային պահեստ, որից 2-ը միջազգային կառույցների աջակցությամբ, 33-ը՝ մասնավոր ներդրումներով ստեղծված, և 5 փաթեթավորման ենթակառուցվածքներ: 4) ՀՀ Կոտայքի մարզ – Նոր Հաճն համայնքի Նոր Գեղի գյուղում գործարկվել է 100 տոննա հզորությամբ սառնարանային տնտեսություն: 5) ՀՀ Լոռու մարզ – Ստեփանավան համայնքում ՄԱԿ-ի զարգացման ներդրումային ծրագրով գործում է «Լոռվա հատիկ» հատիկաընդեղենի փաթեթավորման կայան: 6) ՀՀ Գեղարքունիքի մարզ – Վարդենիս համայնքի Ավազան բնակավայրում 2024 թվականին մասնավոր ներդրողի կողմից նախատեսվել է կառուցել 10-15 տոննա տարողությամբ սառնարանային տնտեսություն: Միաժամանակ, սառնարանային տնտեսությունների կառուցման կամ վերազինման նպատակով ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում 2023 թվականին հաստատվել է ՀՀ Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Տավուշի մարզերի և Երևան քաղաքի 9 շահառուի լիզինգի հայտ՝ շուրջ 1047.5 մլն դրամ ծավալով:
Միջոցառում 4.2 Աշխարհագրական նշումների մասին օրենքի բարելավում և ավելի քան 10 անվանում	Ազգային Ժողովի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 26-ին ընդունվել է «Աշխարհագրական նշումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը (ՀՕ-398-Ն, այսուհետ՝ Օրենք), որի կիրարկումն ապահովելու նպատակով 2023 թվականի հունվարի 19-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 10-ի N 310-Ն

հայկական աշխարհագրական նշումներով արտադրանքի գրանցում	որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության N 75-Ն որոշումը։ Օրենքով սահմանված կարգով Մտավոր սեփականության գործակալությունում որպես աշխարհագրական նշումով արտադրանք գրանցելու նպատակով USAID-ի աջակցությամբ և միջազգային փորձագետի ներգրավմամբ մշակվել և Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 27-ի N 2381-Լ հրամանով հաստատվել են «Հայկական մածուն», «Հայկական լավաշ», «Հայկական բաստուրմա» և «Հայկական սուջուխ» աշխարհագրական նշումների տեխնիկական հատկորոշումները (այսուհետ՝ տեխնիկական հատկորոշումներ)։ Տեխնիկական հատկորոշումների հիման վրա համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման նպատակով Էկոնոմիկայի նախարարությունում 2023 թվականի դեկտեմբերի 4-ին կազմակերպվել է քննարկում տվյալ ոլորտներում հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնց տրամադրվել են տեխնիկական հատկորոշումները։ Տեխնիկական հատկորոշումների հիման վրա համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումից հետո վերը նշված աշխարհագրական նշումներով ապրանքների գրանցման նպատակով կկազմվեն և Մտավոր սեփականության գործակալություն կներկայացվեն համապատասխան հայտեր։ Միաժամանակ, ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) Հայաստանի գործարար միջավայրի բարելավում ծրագրի աջակցությամբ աշխատանքներ են իրականացվել Վայոց ձորի գինիների աշխարհագրական նշումների գրանցման գործընթացն իրականացնելու ուղղությամբ։ Իրականացվել է Հայաստանի գործարար միջավայրի բարելավում ծրագիրը՝ Վայոց ձորի գինիների աշխարհագրական նշումների գրանցման գործընթացն իրականացնելու նպատակով։ Վայոց ձորի գինեգործների և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ներկայացուցիչների հետ 2023թ. հունիսին կազմակերպվել է աշխատաժողով՝ Վայոց ձորի գինիների տեխնիկական հատկորոշիչների մշակման և ամբողջականացման նպատակով։ Արդյունքում մշակվել է «Վայոց ձորի գինիներ» աշխարհագրական նշումով գինիների տեխնիկական հատկորոշումները։
Միջոցառում 4.3 Բույսերի սորտերի պահպանության միջազգային միությանը (UPOV) ՀՀ անդամակցության ապահովում	2023թ.-ին ընդունվել է «Բույսերի սորտերի պահպանության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի անգլերեն թարգմանված տարբերակը, ինչպես նաև լրացված անհրաժեշտ փաստաթղթերը ՀՀ ԷՆ կողմից ներկայացվել են ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ սահմանված կարգով Բույսերի սորտերի պահպանության միջազգային միություն ներկայացնելու համար։

Միջոցառում 4.4 Հայաստանի գինիների առաջխաղացում	Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) կազմակերպել է հայկական գինեգործական ընկերությունների մասնակցությունը Պրոդէքսպո-2023 (ՌԴ), Լոնդոնի գինու ցուցահանդես-2023 (ՄԹ), Պրովայն-2023 (ԳԴՀ) ցուցահանդեսներին, Mundus Vini 2023, Concours Mondial de Bruxelles 2023 միջազգային մրցանակաբաշխություններին, ՌԴ-ում, ՄԹ-ում գինու համտես-շնորհանդեսներին, աջակցել է նաև հայկական գինեգործական ընկերություն-ների մասնակցությանը՝ ԱրմՎայն-2023 հայկական գինիների փառատոնին Սանկտ Պետերբուրգում, Զատիկ գինու փառատոնին և Դիլիջանի Գինու Փառատոնին: Հիմնադրամը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության /ԳՄՀԸ/ աջակցությամբ կազմակերպել է «Հայաստանի գինիներ» կույր համտես-մրցույթը: Մրցույթի երկու փուլերին մասնակցել է մոտ 140 տեսակ գինի: Ինչպես նաև Հիմնադրամը շարունակում է աջակցել Wines of Armenia հարթակի միջոցով Եվրոպայում հայկական գինիների ճանաչելիության բարձրացման աշխատանքներին: ԳՄՀԸ աջակցությամբ Հիմնադրամը աջակցել է նաև «Գինու բիզնես» միջազգային համաժողովի անցկացմանը, JancisRobinson.com կայքի գլխավոր խմբագիր Թամլին Քարինի Հայաստան այցի կազմակերպմանը, հայկական գինիների ներկայացմանը «ԿԱՏԱՊՈՒԼՏ ՏԱՂԱՎԱՐ» ստեղծարար արդյունաբերության էքսպոյին և «MEDS Գյումրի 2023» աշխատարանին, Wine is beautiful in Armenia մեդիանախագծի իրականացմանը, «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության հմտություններ» թեմայով դասընթացի իրականացմանը: Հիմնադրամը մայիսին հյուրընկալել է գինու ամերիկյան Grape Collective ամսագրի հեղինակ Քրիստոֆեր Բարնեսին, իսկ հոկտեմբերին՝ ԳՄՀԸ աջակցությամբ՝ Winemag.it իտալական առցանց պարբերականի գլխավոր խմբագիր, գինու քննադատ Դավիթ Բորտոնեին, գինու միջազգային գնորդ Ջիովաննի Լոմբարդոյին, և գինու բրիտանացի լրագրող Յակոպո Մացեոյին, ինչպես նաև Եվրոպայում գինիների համտեսի ամենամեծ Concours Mondial de Bruxelles մրցույթի կազմակերպիչ Քվենտին Ավոյին և մրցույթի դատավոր, գինու լրագրող Թոմաս Բրանդլին: Հիմնադրամն ու Իսպանիայի Առևտրային պալատը կազմակերպել են Ագրոարդյունաբերության ֆորում: Հիմնադրամը Պորտուգալիայում մասնակցել է WineFuture միջազգային համաժողովին: Հիմնադրամը «Համատեղ բիզնեսի ուժը» խորագրով գործարար համաժողովի մասնակիցներին ներկայացրել է Հայաստանի գինեգործության ոլորտի զարգացման ուղղություններն ու առաջնահերթությունները: ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի ֆինանսավորմամբ և աջակցությամբ՝ Հիմնադրամը ներկայացրել է հայկական գինեգործական ընկերություններին Wine Travel Awards 2022-2023 գինու զբոսաշրջության միջազգային մրցույթին, և Հայաստանը ներկայացվել է Wine Travel Awards Guide Special Edition գինու

	տուրիզմի միջազգային մրցանակաբաշխության ուղեցույցի հատուկ հրատարակության շապիկին՝ որպես «Բացառիկ այցելավայր»։ Հիմնադրամը նոյեմբերի 22-ից 24-ը մասնակցել է Իսպանիայում կայացած ՄԱԿ ԶՀԿ գինու տուրիզմի համաշխարհային 7-րդ համաժողովին։
Միջոցառում 4.5 ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում	Էկոնոմիկայի նախարարի մոտ 2023 թվականի նոյեմբերի 6-ին՝ ԱՄՆ ՄԶԳ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած ռազմավարության մշակման մեկնարկային հանդիպման ընթացքում ներկայացվել և համաձայնեցվել են ռազմավարության մշակման հիմնական մոտեցումները, բովանդակությունը, ինչպես նաև ռազմավարության նպատակներն ու հիմնախնդիրները։ ներկայումս մշակման փուլում է գտնվում ռազմավարության վերլուծական զեկույցը, մասնավորապես. 1. Հայաստանի տնտեսական ակնարկը. արտահանման և ներմուծման ցուցանիշները, աշխարհաքաղաքական համատեքստը, առևտրային հարաբերությունների վերլուծությունը, 2. առաջնային և երկրորդային տվյալների հավաքագրման միջոցով հիմնական մարտահրավերների բացահայտումը (ներառյալ խորը հարցազրույցները), 3. արտահանման կատարողականի համապարփակ վերլուծությունը. 1) առաջնային արտահանման ապրանքային խմբերի վերլուծությունը, 2) առաջնային շուկաների ընտրությունը, 3) լոգիստիկայի և ենթակառուցվածքի խնդիրների վերլուծությունը, 4) արտահանման խթանման խնդիրների վերլուծությունը, 5) ազգային արտահանման խթանման կարողությունների համապարփակ վերլուծությունը, 6) արտահանողների կարողությունների վերլուծությունը. ենթակառուցվածքները, շուկայի գիտելիքները, կանոնակարգերը։ Բացի այդ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից իրականացվել է ՀՀ արտահանման այընտրանքային շուկաների համապարփակ վերլուծություն՝ գնահատելով Հայաստանի արտահանման խոցելիությունը, այլընտրանքային շուկաների ընտրության վրա ազդող գործոնները, լոգիստիկ դժվարությունները, ինչպես նաև որոշ առանձին պարենային ապրանքների համար (գինի, պանիր, ձուկ, լոլիկ, վարունգ, ծիրան, դեղձ և այլ բանջարեղեններ) արտահանման շուկաների դիվերսիֆիկացումը և մարտահրավերները։ Արտաքին շուկաներում հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման, գործարար նոր կապերի հաստատման և համագործակցությունների ձեռքբերման, արտադրանքի արտահանման ծավալների աճի խթանման նպատակով Էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ ապահովվել է մասնակցություն՝

	• «Պրոդէքսպո-2023» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդես, ՌԴ Մոսկվա, 2023թ. փետրվար • «Mundus Vini 2023» ցուցահանդես, ԳԴՀ Նոյշտադդ քաղաք, 2023թ. փետրվար • «ProWein 2023» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդես, ԳԴՀ Դյուսելդորֆ քաղաք, 2023թ. մարտ • «London Wine Fair» գինիների միջազգային ցուցահանդես, ՄԹ Լոնդոն, 2023թ. մայիս • «Concours Mondial de Bruxelles 2023» միջազգային ցուցահանդես, ԽՀ Պրորեչ քաղաք, 2023թ. մայիս • Չինաստանի ներմուծման 6-րդ միջազգային ցուցահանդես, ՉԺՀ Շանհայ քաղաք, 2023թ. նոյեմբեր Ինչպես նաև նախատեսվում է ապահովել մասնակցություն՝ • «Կանաչ շաբաթ» ցուցահանդես-վաճառք, ԳԴՀ Բեռլին, 2024թ. հունվար • «Gulfood» սննդի և խմիչքի ցուցահանդես, ԱՄԷ Դուբայ, 2024թ. փետրվար • «ProWein 2024» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդես, ԳԴՀ Դյուսելդորֆ քաղաք, 2024թ. մարտ
Միջոցառում 4.6 Տրանսպորտային փոխադրամիջոցների, մեքենասարքավորումների ձեռքբերմանը և կապիտալ շինարարության իրականացմանն աջակցություն	Կառավարության 2020 թվականի թիվ 355-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված Արտադրողականության խթանման միջոցառման շրջանակներում մինչև 42 ամսով սուբսիդավորվում է նպատակային վարկերի/լիզինգի տարեկան տոկոսադրույքի 6-10%-ը: Օժանդակությունը կիրառելի է այն վարկերի/լիզինգի նկատմամբ, որոնք տրամադրվում են միջոցառման իմաստով նպատակային ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին՝ նոր/չօգտագործված մեքենա-սարքավորումներ ձեռք բերելու և(կամ) մեքենա-սարքավորումների մոնտաժման կամ սպասարկման դեպքում կապիտալ շինարարություն իրականացնելու նպատակով: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ միջոցառման շրջանակներում ձևավորված պորտֆելը կազմում է 207 մլրդ դրամ՝ 3591 պայմանագրերով:
Միջոցառում 5.1 ՀՀ ԷՆ աշխատակիցների և գյուղացիական տնտեսությունների կարողությունների հզորացում գյուղատնտեսության ոլորտում առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման և կլիմայի փոփոխության համատեքստում	«Միջազգային համաձայնագրով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետում իրականացումն անմիջականորեն կապված է Հայաստան-Ռոզվող գյուղատնտեսության զարգացումը ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ծրագրի միջազգային օպերատորի ընտրության հետ, որի Տեխնիկական առաջադրանքի փոփոխություններով պայմանավորված, նախաձեռնվել է միջազգային օպերատորի նոր մրցույթ, որը հայտարարվել և իրականացվել է 2023 թվականի սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 2-ը: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացվել են նոր մրցույթի ընթացակարգով նախատեսված աշխատանքները, ինչի արդյունքում ընտրված օպերատորի կողմից կիրականացվեն ծրագրով նախատեսված միջոցառումները»:

Միջոցառում 5.2 Մասնագիտական խորհրդատվական խմբերի ձևավորում և խորհրդատվական ծառայության տրամադրում գյուղացիական տնտեսավարողներին	«Միջազգային համաձայնագրով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետում իրականացումն անմիջականորեն կապված է Հայաստան-Ռոզվող գյուղատնտեսության զարգացումը ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ծրագրի միջազգային օպերատորի ընտրության հետ, որի Տեխնիկական առաջադրանքի փոփոխություններով պայմանավորված, նախաձեռնվել է միջազգային օպերատորի նոր մրցույթ, որը հայտարարվել և իրականացվել է 2023 թվականի սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 2-ը: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացվել են նոր մրցույթի ընթացակարգով նախատեսված աշխատանքները, ինչի արդյունքում ընտրված օպերատորի կողմից կիրականացվեն ծրագրով նախատեսված միջոցառումները»:
Միջոցառում 5.3 Սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղվող սուբյեկտների և տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացում	Սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղվող սուբյեկտների և տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացում նպատակով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ ՀԱԱՀ) «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» բակալավրիական կրթական ծրագրի մասնագիտական կրթության ծրագրերի (ՄԿԾ) շրջանակում մի շարք առարկաների դասավանդման նյութերում ներառվել են սերմնաբուծության և սերմարտադրության խնդիրներն ու դրանց լուծման ուղղված միջոցառումներ, ագրոտեխնոլոգիական հարցեր: Միաժամանակ աշխատանքներ են տարվել, խորհրդակցություններ են վարվել սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղվող տնտեսավարողների համար դասընթացներ կազմակերպելու նպատակով ֆինանսական միջոցներ ներգրավելու ուղղությամբ:
Միջոցառում 5.4 Ռեսուրսախնայող գյուղատնտեսության վերաբերյալ գյուղացիական տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացում և իրազեկվածության բարձրացում	ՀԱԱՀ-ը մշակել և/կամ պարբերաբար վերանայում է բակալավրիատի ծրագրերը և ՄԿԾ-ը՝ հաշվի առնելով և գնահատելով դրանց համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, միտված՝ ժամանակակից թվային տեխնոլոգիաների օգտագործմամբ գյուղատնտեսության կայուն զարգացման, ռեսուրսախնայող գյուղատնտեսության վարմանը, որի նպատակով ֆակուլտետներին կից ստեղծվել են ագրոարդյունաբերական խորհուրդներ: Գյուղատնտեսության թվայնացման և ճշգրիտ գյուղատնտեսության վարման նպատակով ՀԱԱՀ-ում հիմնադրվել է դրոնների լաբորատորիա, որը կահավորված է 4 տիպի դրոններով, որից մեկը նախատեսված է բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների մշակման և իրականացման համար: Ստեղծված լաբորատոր բազայի հիման վրա իրականացվում է ճշգրիտ գյուղատնտեսություն ՄԿԾ-ն, իրականացվում են նաև ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ ոռոգման նորագույն տեխնոլոգիաների հետազոտման և ներդրման աշխատանքներ: Հայաստանում աշխատուժի զարգացման» ծրագրի շրջանակում ՀԱԱՀ-ն կազմակերպել է «ԱԹՍ-ների (դրոնների) կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում» անվճար դասընթաց:

	Դասընթացի միջոցով մասնակիցները ձեռք են բերում գիտելիքներ և գործնական հմտություններ ԱԹՍ-ների կիրառմամբ գյուղատնտեսական հողատարածքներում սրսկումների իրականացման ոլորտում՝ դառնալով ագրոդրոնի օդաչու/օպերատոր (ագրոպիլոտ)։ Միաժամանակ աշխատանքներ են տարվել, ռեսուրսախնայող գյուղատնտեսության վերաբերյալ գյուղացիական տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացման և իրազեկվածության բարձրացմանն ուղղված դասընթացներ կազմակերպելու համար ֆինանսական միջոցներներ ներգրավելու ուղղությամբ։
Միջոցառում 5.5 «Գյուղատնտեսական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Մշակվել է Գյուղատնտեսության մասին ՀՀ օրենքի նախագիծը, որը գտնվում է շրջանառության փուլում:
Միջոցառում 6.1 Ագրոպարենային համակարգում ժամանակակից հմտությունների և կարողությունների զարգացում գյուղական բնակավայրերի պատանիների և երիտասարդների համար	Միջոցառման սկիզբ նախատեսված է 2024 թվականը։
Միջոցառում 7.1 Գյուղատնտեսական աջակցության ծրագրերի իրականացման ընթացակարգի թվայնացում	Էկոնոմիկայի նախարարության SS մասնագետների հետ համատեղ աշխատանքներ են տարվել գյուղատնտեսական աջակցության ծրագրերին դիմելու ընթացակարգը թվայնացնելու նպատակով տեխնիկական առաջադրանքի մշակման ուղղությամբ։
Միջոցառում 7.2 Գյուղատնտեսությունում տնտեսավարողների հաշվառման համակարգի ստեղծում և վարում	Միջոցառման սկիզբ նախատեսված է 2024 թվականը։
Միջոցառում 7.3 Գյուղատնտեսությանն առնչվող թեմատիկ շերտերի ստեղծում, վարում և ընդլայնում, ինտեգրում	Մշակվել և Կադաստրի կոմիտե է ներկայացվել «Խաղողի տնկարկ» թեմատիկ շերտի ստանդարտը։ Աշխատանքներ են իրականացվել սպանդանոցների, կենդանիների անասնագերեզմանոցների, բեկարի հորերի, գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի շրջանակում ինտենսիվ այգիներ, խելացի անասնաշենքեր հիմնած, կառուցած շահառուների տվյալների հիման

Կադաստրի կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալին	վրա գյուղատնտեսական տարածական տվյալների ստեղծման և ստանդարտների մշակման ուղղությամբ: